

Ջրային պրոբլեմների և հիդրոտեխնիկայի գիտահետազոտական
ինստիտուտի աշխատավորական կոլեկտիվի լիազորների ժողովի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

Ջրային պրոբլեմների և հիդրոտեխնիկայի գիտահետազոտական
ինստիտուտը ապապետականացնելու մասին

Ելնելով գիտության բնագավառում բարեփոխումների անհրաժեշտությունից
ինստիտուտի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով և
ղեկավարվելով «Պետական օրյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման
մասին» ՀՀ օրենքի N:23 հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով, աշխատավորական
կոլեկտիվի լիազոր ներկայացուցիչների ժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

1. Տալ համաձայնություն ջրային պրոբլեմների և հիդրոտեխնիկայի
գիտահետազոտական ինստիտուտը ապապետականացնելու համար:

2. Խնդրել ՀՀ գյուղատնտեսության և պարենի նախարարությանը

2.1 Ինստիտուտի ապապետականացումը իրականացնել «Պետական
ձեռնարկությունների և անավարտ շինարարության օրյեկտների սեփականաշնորհման և
ապապետականացման մասին» ՀՀ օրենքի N:38 և N:39 հոդվածներով նախատեսված
պետական ձեռնարկություններն առանց գնման իրավունքի վարձակալության հանձնելու
կարգով:

2.2 Վարձակալ ճանաչել ինստիտուտի աշխատակիցների և բնագավառի
մասնագետների մասնակցությամբ կազմավորվող «Հայջուր» գիտաարտադրական
միավորումը:

Ծանուցում.

Որոշումը ընդունվել է փակ գաղտնի քվեարկության արդյունքներով ինստիտուտի
կոլեկտիվի լիազոր ներկայացուցիչների ժողովում 1996 թ. հունիսի 14-ին ձայների 3/4-ից
ակելի մեծամասնությամբ:

Ժողովի նախագահ

Է. Բարսեղյան

Է. Բարսեղյան

Ժողովի քարտուղար,
արհիվանի նախագահ

Կարսեղյան

Կ. Աղաբաբյան

